ԿԱՐՆՈ ՆԱՀԱՆԳԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (XIX դ. երկրորդ կես)

Հ. Գ. ՁԱՏԻԿՅԱՆ

Կարնո նահանգը զբաղեցնում է պատմական Հայաստանի Բարձր Հայք նահանգի տարածքի զգալի մասը։ Բարձր Հայքի մասին «Աշխարհացույցը» հայտնում է. «Առաջին աշխարհ Բարձր Հայք... եւ բարձր ոչ միայն քան ղՀայք, այլ զամենայն երկիր. վասն որոյ Կատար երկիր կոչեցին զնա»[1]։ Բարձր Հայքի, Տայքի, Փոքր Հայքի տարածքի մի մասում ձևավորվել է հայասա-ազգի ցեղային միությունը, որը խոշոր դեր է խաղացել հայ ժողովրդի կազմավորման գործում։ Հայաստանի առաջին բաժանումից հետո (387 թ.), Բարձր Հայքը մտավ Հռոմեական կայսրության տիրապետության տակ։ Շուտով այն վերածվեց կոմեսության, ուր հայ նախարարները պահպանեցին զգալի ինքնուրույնություն։

VII դ., կարճ ժամանակով Բարձր Հայքին տիրացան արաբները։ 689 թ. Բյուզանդական կայսրությունն այն նորից հետ գրավեց։ XI—XII դդ. Բարձր Հայքը ենթարկվեց սելջուկների, XIII դ.՝ Ջալալեդդինի ու մոնղոլների, XIV դ.՝ Լենկթեմուրի, XV դ.՝ ակ-կոյունլու, կարա-կոյունլու ցեղերի ասպատակություններին։

1299 թ. հիմնադրվեց Օսմանյան կայսրությունը։ Հետագայում թուրքերը գրավելով Կ. Պոլիսը, ստեղծեցին մի հսկայածավալ կայսրություն, որը մինչև 1639 թ. անզիջում պայքար էր մղում Սեֆյան Պարսկաստանի դեմ։ Նույն թվականին նրանց միջև կնքվեց պայմանագիր, որով Թուրքիային անցան Արարատյան նահանգի հարավային գավառները, Տուրուբերանը, Վասպուրականի մեծ մասը՝ Վան քաղաքով, Բարձր Հայքը, Կորճայքը, Մոկքը։ Արևելյան Հայաստանում կազմվեցին բեգլար-բեգություններ, իսկ Արևմտյան Հայաստանում՝ վիլայեթներ։ Այնուհետև կազմվեցին Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքիրի, Վանի վիլայեթները։ Նրանցից ամենամեծ տարածք ունեցողը Էրզրումի (Կաբինի) վիլայեթն էր, որը միաժամանակ սերասկյարի՝ Թուրքիայի արևելյան զորամիավորումների գլխավոր հրամանատարի, նստավայրն էր։

Կաբինի նահանգն արևելքից սահմանակից էր Երևանի, արևմուտքից՝ Փոքր Հայքի, հարավից՝ Դիարբեքիրի ու Վանի, հյուսիսից՝ Տրապիզոնի նահանգներին։

Բարձր Հայքն իր վարչական, տնտեսական ու մշակութային խոշոր կենտրոն Կարին քաղաքի անունով անվանվել է նաև Կարնո երկիր, Կարնո աշխարհ։

Կարինը, հայոց հինավուրց, պատմական հարուստ անցյալ ունեցող քաղաքներից է։ Նրա մասին հիշատակություններ կան Ստրաբոնի, Պլինիոսի, Պրոկոպիոս Կեսարացու, արաբական պատմիչների աշխատություններում, հայկական ավանդություններում, պատմահայր Մովսես Խորենացու, Փավստոս Բուզանդի, Սեբեոսի, Ղազար Փարպեցու, Հովհաննես Դրասխանակերտցու, Ստեփաննոս Օրբելյանի, Առաքել Դավրիժեցու և այլոց երկերում։

Կաբինը շրջապատված է լեռներով։ Հարավում Բյուրակնյա լեռներն են, նշանավոր Գոհանամք գագաթով։ Քաղաքի հյուսիսային կողմում Խաչափայտի լեռներն են, արևելքից՝ Ծիրանյաց, Ուղտի պարանոց (Դեվեբոյն) լեռները։ Կարինը երիզող մյուս լեռը Այծպտկունքն է, հարավային և հարավ-արևմտյան սահմանագիծը Ջիու թամբ կոչվող լեռներն են, որոնք այդ ուղղությամբ յուրահատուկ պաշտպանական գիծ են կազմում։

---

1 Աշխարհացույց Մովսեսի Խորենացւոյ, Վենետիկ, 1881, էջ 29—30։

Կարինը շրջապատող պարիսպներն ունեին չորս դռներ՝ արևմտյան կամ Երզնկայի, արևելյան՝ Թավրիզի, հյուսիսային՝ Օլթիի, հարավ-արևմտյան՝ Խարբերդի։

Կարինի միջնաբերդն ուներ տասներկու աշտարակ։ Միջնաբերդի պարիսպներից դուրս նահատակի կամուրջն է։ Քաղաքի հուշարձանների զարդը ս. Սարդիս եկեղեցին էր՝ իր քանդակազարդ արտաքինով և ներքին խոյաքանդակներով։ Ս. Աստվածածին եկեղեցին, որը կոչվում էր նաև Միարան ս. Աստվածածին, հանդիսացել է Բարձր Հայքի գլխավոր սրբավայրը։

Կարինի XIX դ. բնակչության թվի մասին կան հակասական տեղեկություններ։ Աղբյուրներից մեկը հայտնում է, որ 1847 թ. քաղաքն ունեցել է 55 000 բնակչություն, 1853—1856 թթ.՝ 60 000, որից 10 000-ը հայեր[2], 1869 թ.՝ 90 000 բնակչություն և այլն[3]։

Հակասական տեղեկությունների հիմնական պատճառը թուրքական պաշտոնական վիճակագրության կողմնակալությունն էր։ Ուսումնասիրողներն ու ճանապարհորդներն օգտվում էին առաջին իսկ պատահած տեղեկություններից, ուստի նրանց հայտնած տվյալներն ամբողջությամբ հավաստի ընդունելը դառնում է անհնար։

Կարինում XIX դ. երկրորդ կեսին կային 3000 խանութ, քաղաքում գործում էին 1000 արհեստավորներ, միայն հայազգի 500 վաճառականներ, քաղաքի շրջակայքում կային 50—60 շրաղացներ, որոնց մեծ մասը պատկանում էր հայերին։ Գործող 40—45 ոսկերչական խանութների գերակշիռ մասը գտնվում էր հայերի ձեռքում, որոնց տնօրինության տակ էր այդ բնագավառի ողջ առևտուրը։

Կարինը նաև առևտրական խոշոր կենտրոն էր։ Պարսկաստանից Սև ծով, Անդրկովկասից Կ. Պոլիս և այլ առևտրական ուղիներն անցնում էին Կարինով։ Քաղաքում գործում էին մի քանի իջևանատներ, առևտրական տներ։ Իջևանատներից ամենաբարեկարգը հայի պատկանող «Պողոս» անվանյալ իջևանատունն էր։ Այն կուլիսաձև, եռահարկ շինություն էր[4]։

Կարինով անցնող առավել բանուկ առևտրական ուղիներից էր Տրապիզոն—Ջուղա գիծը։ Քաղաքով էին անցնում նաև Ամիդ (Դիարբեքիր), Վան, Սեբաստիա (Սվազ), Հալեպ, Դամասկոս, Կ. Պոլիս, Թիֆլիս և Երևան տանող առևտրական ճանապարհները։

Էդ. Նաումանի վկայությամբ, տարեկան Կարին էին մտնում 40 միլիոն մարկ արժողության զանազան ապրանքներ[5]։ Քաղաքի առևտրական խոշոր կենտրոն լինելու փաստը նկատի ունենալով, դեռևս XVIII դ. վերջերին Կարինում հիմնվում է անգլիացի վաճառականների առևտրական տունը, որը սերտ հարաբերությունների մեջ էր ոչ միայն տեղի հայ վաճառականների, այլև, հետագայում, XIX դ. 50-ական թվականներից, Մանչեստրի հայ առևտրական ընկերության հետ։ Քաղաքի ու նահանգի առևտրական գործարքներից ամենաեկամտաբերը ոչխարի առևտուրն էր։ «Ոչխարի վաճառականությունն այնչափ նշանավոր է, որ տարեկան հասնում է 1.200.000 տաճկական ոսկու (մոտ 20 միլիոն մարկ) և այդ գումարի մեծ մասը մնում է Էրզրումի հայերի ձեռքը»[6],—գրում է Էդ. Նաումանը։ Կարինի վաճառականներն արտահանում էին գլխավորապես հում նյութեր, ներմուծում էին 687.500 ֆրանկ արժողության թեթև արդյունաբերական և լայն սպառման ապրանքներ[7]։

---

2 Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Զ., Երևան, 1934, էջ 294։

3 Հ. Քոսյան, Բարձր Հայք, հ. 1, Վիեննա, 1925, էջ 47—48։

4 Էդ. Նաուման, Էրզրում, Թիֆլիս, 1869, էջ 6։

5 Նույն տեղում, էջ 29։

6 Նույն տեղում, էջ 30։

7 Հ. Էփրիկյան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 2, գիրք Ա, Վենետիկ, 1907, էջ 304—305։

Թուրքիայի նշանավոր ու մեծահարուստ առևտրականներից էին կարինցիներ Գրիգոր, Սարդիս, Կարապետ Պալլարյանները, Նշկյան, Ասատրյան, Ֆնտգլյան, Ցուսուֆյան, Տուզյան եղբայրները, Արել Կյուլպենկյանը և շատերը, որոնց ձեռքին էր կենտրոնացված նահանգի առևտրի 90 %-ը։ Փաստրամաճյան եղբայրները տնօրինում էին մսի առևտուրը և միս մատակարարում անգամ թուրքական բանակին։

Կարինում և նահանգում գործում էին կերպասեղենի, կաշեգործական, մետաքսի, կոշիկի, բրդյա ծածկոցների, գորգագործական արհեստանոցները։ Մեծ թիվ էին կազմում դերձակները, հյուսները, որմնադիրները, փայտամշակությամբ զբաղվողները։ Առավել հայտնի արհեստավորներից էին զինագործները, որոնցից նշանավոր էին Ցոթ եղբայրները։ Նրանց պատրաստած զենքերն իրենց որակով չէին զիջում եվրոպական արտադրությանը[8]։ Կարինի զինագործների պատրաստած զենքերը ցուցադրվել են Փարիզի 1867 թ., Ֆիլադելֆիայի 1876 թ., Վիեննայի 1873 թ. ցուցահանդեսներում և արժանացել պարգևների։

Եվրոպացի ճանապարհորդները հիացմունքով էին խոսում նահանգի ձիաբույծների մասին։ Զարգացած ձիաբուծությունը հնարավորություն էր տալիս զբաղվել նաև ձիավաճառությամբ։ Նրանք նշում են, որ «հայ ձիավաճառը իրենց եվրոպական եղբայրակիցներին բանի մը մեջ վար չեն մնար»[9]։

Կարինը ոչ միայն ռազմական, առևտրաարհեստավորական, այլև մշակութային խոշոր կենտրոն էր։ XIX դ. երկրորդ կեսից Կարինում և նահանգում սկիզբ դրվեց աշխարհիկ ուսուցմանը։ 1863 թ. արևմտահայերի սահմանադրությունից հետո դպրոցների տնօրինությունն անցավ թաղական խորհուրդների և դրանց կողմից նշանակված հոգաբարձուների ձեռքը։ 1860 թ. սկսած դպրոցներն աշակերտներին տալիս էին ոչ միայն կրոնական, այլև աշխարհիկ գիտելիքներ։ Նշանավոր էին Սանասարյան, Արծնյան, Գավաֆյան, Մսըրյան, Տ. Ագատյան, Աղապալյան, Հովսեփյան յոթնամյա վարժարանները, ուր սովորում էին 2168 աշակերտներ, պաշտոնավարում էին 98 ուսուցիչներ։ Կարինի գավառում գործում էին 114 դպրոցներ, ուր սովորում էին 535 աշակերտներ[10]։ Նշված վարժարաններից բացի, գործում էին ամերիկյան որբանոցի դպրոցը, ամերիկյան վարժարանը, Մայրապետաց վարժարանը և պետական վարժարանը, որոնց աշակերտները հիմնականում հայեր էին։ Այդ վարժարաններում աշակերտների թիվը հասնում էր 149-ի[11]։ Կարինի հոգևոր առաջնորդ Հարություն Վեհապետյանի ջանքերով 1870 թ. բացվել է Թարգմանչաց վարժարանը[12]։

Վարժարաններից ամենահինը Արծնյան վարժարանն էր (1811—1912)։ Նահանգի կրթական ու մշակութային կյանքի աշխուժացմանը մեծապես նպաստել է Գրիգորիս եպիսկոպոս Զորաբաբելյանը։ Նրա հայրենասիրական կոչերից հետո, նվիրատվությունների շնորհիվ, մեկը մյուսի հետևից բացվում էին նորանոր վարժարաններ։ Վարժարաններում ուսուցանում էին հայերեն, թվաբանություն, պատմություն, կրոն, աշխարհագրություն, իրավագիտություն, գեղագրություն, գծագրություն, երգեցողություն, մարմնամարզություն։

Կարինի կրթական օջախների շարքում իր առանձնահատուկ տեղն ունի Սանասարյան վարժարանը։ Այն հիմնադրվել է 1881 թ., Մ. Սանասարյանի միջոցներով և Կ. Եզյանի եռանդուն ջանքերով։ Միայն շենքի շինարարության

---

8 П. А. Чихачев, Великие державы и Восточный вопрос, М., 1970, с. 103.

9 Ա. Տրվելն, Գ. Փիսոն, Ուղևորություն ի Փոքր Ասիա։ Վիեննա, 1892, էջ 37։

10 Ա-Դ ո, Վանի, Բիթլիսի և Երզրումի վիլայեթները, Երևան, 1912, էջ 166—167։

11 Հ. Էփրիկյան, նշվ. աշխ., էջ 320—321։

12 Հ. Քոսյան, նշվ. աշխ., էջ 244—245։

վրա ծախսվել է 15.000 օսմանյան լիրա[13]։ «Անկարելի է նկարագրել ժողովրդյան երախտագիտությունը առ բարերարն վարժարանի, բարձր մաղթանքներն և ի խոր սրտե շնորհակալիքն. առ այս, կարծեմ, կպատրաստեին մի շնորհակալաց ուղերձ ներկայացնելու աղա Մկրտիչ Սանասարյանին ընդ միշտ երախտագիտություն առ նորին մեծապատվություն ցուցանելով»[14],— գրում էր դեպքերի ականատես Հ. քահ. Հակոբյանը։ 1885 թ. Մ. Սանասարյանը այցելում է Կարին։ Նրան ժողովուրդն ընդունում է մեծ հանդիսավորությամբ ու ակնածանքով։ 1905 թ.՝ բարերարի մահից հետո, վարժարանի տնօրինությունն անցնում է Կ. Եղյանին։ Վարժարանը 1912 թ. տեղափոխվել է Սեբաստիա և իր գոյությունը շարունակել մինչև 1916 թ.։

Վարժարանում ուսուցումը տարվել է գերմանական, ֆրանսիական, անգլիական առաջնակարգ դպրոցների ծրագրերին համապատասխան։ 1895 թ. տվյալներով վարժարանը ունեցել է X—XVII դդ. արժեքավոր ձեռագրեր, այդ թվում 986 թ. գրված ավետարանը։ Ձեռագրերի ցուցակը կազմել է Հ. Աճառյանը[15]։ Թուրքական կառավարությունը 1899—1900 թթ. վարժարանը ճանաչել է որպես բարձրագույն նախակրթական միջնակարգ վարժարան, որի շրջանավարտներն առանց քննության կարող էին կրթությունը շարունակել Կ. Պոլսի, Ֆրանսիայի ու Գերմանիայի համալսարաններում։

Վարժարանի մասին հիացմունքով է խոսում էդ. Նաումանը, գրելով. «Վարժարանի գերազանց կազմակերպությունն ու վարչությունը զարմացրեց ինձ»[16]։

1851—1908 թթ. Կարինում կազմակերպվել են 17 ընկերություններ, որոնք նպատակ ունեին աշխուժացնել քաղաքի ու նահանգի կրթական, մշակութային կյանքը, օգնության հասնել չքավորներին, կարիքավորներին։ Ընկերություններից նշանավոր էին Կրթական, Թատերական, Արշարունի, Արծրունյան, Ուսումնասիրաց, Հատուկ, Անձնվեր, Վարդանանց, Դպրոցասիրաց, Ընթերցասիրաց, Սիսական, Ազգանվեր, Բարձր Հայոց միություն, Աղքատասիրաց, Աղքատախնամ ընկերությունները, որոնք իրենց բաժանմունքներն ունեին մեծ գյուղերում։

Կարինի և նահանգի մշակութային կյանքի նշանավոր իրադարձություններից էր Թատերական ընկերության գործունեությունը։ Թեև, դեռևս 1870 թ. հիշատակություն կա քաղաքում թատերական ներկայացումների մասին, սակայն, «Մեծն Ներսես» ողբերգության բեմադրությունից հետո թատերական խմբակը դադարեցնում է իր գործունեությունը։ Կ. Պոլսի «Օրագիր» թերթը բարձր գնահատելով ներկայացումը, նշում է, որ այն «կրնա խորին տպավորություն մի գործել նորա (քաղաքի—Հ. Ջ.) բարոյական կենաց վրա»[17]։

Թատերական կյանքը ծաղկում է ապրում 1878 թ.։ Օգտվելով այն հանգամանքից, որ քաղաքում էր գտնվում ռուսական զորքը, կազմակերպվում է «Ազգային թատերական ընկերությունը», որը նպատակ ուներ «հայուն հին փառքերը կամ տառապանքները ներկայացնելով՝ ժողովուրդը եռանդի բերել, անոնց պաղած սրտերը հրահրել և վրեժխնդրության հոգին բորբոքել»[18]։ Ընկերությունը ստեղծում է իր վարչությունը, որի նախաձեռնությամբ էլ սկսվում և 1878 թ. օգոստոսի 9-ին ավարտվում է թատրոնի շենքի շինարարությունը։ Սկզբում բեմադրվել է Պ. Դուրյանի «Սև հողերը», ապա «Վահեի պատերազմը Ալեքսանդր Մակեդոնացու դեմ» հայրենասիրական ներկայացումը, որին ներկա են եղել նաև «10-ի չափ հայազգի զորավարք ռուս

---

13 Արարատ, 1885, փետրվար, էջ 73։

14 Նույն տեղում։

15 Ցուցակ ձեռագրաց Սանասարյան վարժարանի ի Կարին, Վիեննա, 1900, էջ ԺԷ։

16 Է. Ն ա ու մ ա ն, նշվ. աշխ., էջ 21։

17 Օրագիր, Կ. Պոլիս, 1874, № 1321։

18 Հ. Ն շ կ յ ա ն, Առաջին կայծերը, 1930, էջ 38։

սաց»[19]։ Այնուհետև բեմադրվել է «Վարդանանց պատերազմը» հերոսական թեմայով ներկայացումը, որից հետո ընդհարում է տեղի ունեցել հայերի և պարսիկների միջև։

1878 թ. օգոստոսի 30-ին ռուսական զորքերը քաղաքից հեռանալուց հետո, Ֆաղլը փաշան արգելում է թատրոնի գործունեությունը, այն համարելով վնասակար։ Արգելքը, սակայն, չի ընկճում թատերական ընկերությանը, և դերասանները պատրաստում են «Գայլ Վահան» ներկայացման բեմադրությունը։ Զգալով, որ սեփական ուժերով հնարավոր չէ թուրքական տեղական իշխանություններից թատրոնի գործունեության համար իրավունք ձեռք բերել, ընկերությունը որոշում է դիմել Կ. Պոլսի պատրիարքարանի օգնությանը։ Ներսես պատրիարքը հույս չունենալով հաջողության հարցում, խորհուրդ է տալիս չդիմել Բ. Դռանը, որովհետև «բռնություններուն աղբյուրը Պոլիսն է... ուրեմն վերստին կրսեմ, տեղվոյն մեջ լուծելու եք այդպիսի խնդիրներ, նոյնիսկ պիտի ըսեմ ամեն խնդիր»[20]։ Չկարողանալով հաղթահարել թշնամական վերաբերմունքը, թատերական ընկերությունը դադարեցնում է իր գործունեությունը։ Հատկանշական է այն փաստը, որ չնայած արգելքներին, ներկայացումներին հաճախել են նաև քաղաքի թուրք բնակչության ներկայացուցիչները, ներկայացումների ժամանակ նվագել է թուրքական զինվորական նվագախումբը։ Ներկայացումները տրվել են տեղական ուժերով. հիմնական կորիզը կազմում էին Սանասարյան վարժարանի բարձր դասարանների աշակերտները։

Կարինի մշակութային կյանքի կարևոր երևույթներից էր նաև թերթի տպագրությունը։ Առաջին խմորատիպ թերթը «Գարունն» էր (1870-ական թվականներ)։ Այնուհետև տպագրվել է ևս մեկ խմորատիպ թերթ, որի «անունը նշած է «Սիրտ»[21]։

Հայ և եվրոպացի հեղինակները, որոնք հիշատակություններ են թողել Կարինի մասին, կամ աշխատություններ գրել, նշում են, որ քաղաքը ասիական տիպի բնակավայր էր, ծուռումուռ, անսալահատակ փողոցներով, որոնք մեծ մասամբ գտնվում էին անբարեկարգ վիճակում։ Այդ պատճառով էլ, սվելացնում է Ե. Լալայանցը, «ամառը սաստիկ փոշի, իսկ ձմռանը անանցանելի ցեխ է լինում։ Տները ցած և անկանոն էին, սովորաբար մի հարկանի, հոքրիկ դռներով և պատուհաններով, միայն քրիստոնյաների թաղում կային երկհարկանի տներ»[22]։

Հայերը բնակվում էին քաղաքի հյուսիսային և հյուսիս-արևմտյան թաղամասերում, որոնք Կարինի բարեկարգ ու մաքուր շրջաններն էին։ Այդտեղ էին տեղավորված ինչպես վարչական շենքերը, այնպես էլ անգլիական, ֆրանսիական ու ռուսական հյուպատոսարանները։

Բարձր Հայքը ընդհանրապես, Կարին քաղաքն ու նահանգը մասնավորապես, հայտնի են խիստ կլիմայով։ Ձմռանը սառնամանիքները հասնում են 0—45 աստիճանի։ Նահանգը ձյունառատ է, երբեմն այնքան ձյուն է տեղում, որ փակում է հաղորդակցության ուղիները։ Նահանգին, հատկապես Կարին քաղաքին, մեծ վնասներ են պատճառել երկրաշարժերը (1809, 1843, 1892, 1895 թթ.), որոնք խլել են բազմաթիվ մարդկային կյանքեր, պատճառել նյութական վնասներ[23]։

XIX դ. երկրորդ կեսին Կարինի նահանգն ուներ երեք գավառ (սանջակ)՝ Կարինի (որն ամենամեծն էր), Երզնկայի, Բայազետի, ինը գավառակ (կազա), Կարինի, Բասենի, Խնուսի, Դերջանի, Կիսկիմի, Նամրվանի և այլն։

---

19 Ղ. Չարըգ, Հուշամատյան Բարձր Հայքի, Բեյրութ, 1957, էջ 301։

20 Հ. Նշկյան, նշվ. աշխ., էջ 71։

21 Ղ. Չարըգ, նշվ. աշխ., էջ 313, 278։

22 Բանբեր Հայաստանի արխիվների, 1974, № 3, էջ 86։

23 Ղ. Չարըգ, նշվ. աշխ., էջ 47։

Հ. Կարնեցին Կարինն անվանում է «նստող փաշայի կերվածք»[24]։ Այսինքն, կուսակալը կառավարությունից աշխատավարձ չէր ստանում և պետական բարձրաստիճան պաշտոնյաներին կուսակալ նշանակվելու համար տված կաշառքը կարող էր դուքումների ու հարստահարության ճանապարհով հետ բերվել։

Կարինի նահանգի ընդհանուր տարածքը կազմում էր 76.720 հազար քառակուսի մետր, որից 25.500 հազար քառակուսի մետրը վարելահող էր, 15.860 հազար քառակուսի մետրը՝ այգի, պարտեզ, 35.360 հազար քառակուսի մետրը՝ անտառ, արոտավայր էր[25]։

Դարի վերջում նահանգում տարեկան հավաքվել է 33.833.000 չինիկ բերք՝ ցորեն, դարի, հաճար, կտավատ, ոսպ, ընկույզ, 626.8100 հոխա մրգեր, լոբազգի կուլտուրաներ, պտուղ, բանջարեղեն[26]։ Մեկ այլ վկայությամբ, 1886—1890 թթ. նահանգում արտադրվել է 28.997.000 չինիկ, կամ մոտ 12 մլն փութ ցորեն, գարի[27]։

Կարինի գավառի ամենաբերրի մասը Կարնո դաշտն է։ Այն ունի 40 կմ երկարություն, 28—30 կմ լայնություն և հարուստ էր թռչուններով։ Եվրոպացի ճանապարհորդներից մեկը գրում է, թե թռչունները այնքան շատ են եղել, որ «կարելի չէր նշմարել հողի գույնը»[28]։

Կարինի գավառի հայկական գյուղերը եղել են բարեկարգ, կառուցված հում աղյուսից։ Պատմական հարուստ անցյալ ունեին Զիթողն, Զիթելիկ, Կակառիճ, Օձնի, Կրիճք, Պատիշեն, Դվնիկ, Գոմք, Երկնիստ, Խաչկավանք, Կան, Արծաթ գյուղերը։ Հինգք գյուղում էր գտնվում Կարմիր վանքը, որը կրում էր ս. Աստվածածին անունը։ Ավանդույթի համաձայն վանքը կառուցել է ս. Ներսեսը։ Վանքի դպրոցում են սովորել Գրիգոր Մագիստրոսը, Անանիա Շիրակացին, Գրիգոր Նարեկացին, Արիստակես Լաստիվերտցին։

Բասենի գավառը հյուսիսից սահմանակից էր Թորթումին, հարավից՝ Խնուսին, Ալաշկերտին։ Գավառով էր անցնում Պարսկաստան-Կարս առևտրական ճանապարհը, Արաքս գետը։ Գավառը հայտնի է հացահատիկի առատությամբ։ Նշանավոր բնակավայրերից էր Դարոյնք (Հասան-Կալա) գավառանիստ ավանը։

Խնուսի գավառը նահանգի ամենաջրառատ գավառն էր, հարուստ հացահատիկով։ Խնուս քաղաքը կառուցված է ձորակի երկու լանջերին։ Հայերը բնակվում էին Զորի թաղում։

Դերջանի գավառն ունի կիսալեռնային կլիմա։ Նշանավոր բնակավայրերից էին Բագառիճը, Բուլքը, Ծաղկուրին։ Գավառում է գտնվում ս. Դավթի վանքը։

Ողիի գավառը գտնվում էր Կարինի գավառի հարավ-արևմտյան մասում։ Հյուսիսից սահմանակից էր Դերջանի, հարավից՝ Խարբերդի, արևելքից՝ Խնուսի, արևմուտքից՝ Երզնկայի գավառներին։ Բնակչությունը հիմնականում զբաղվում էր անասնապահությամբ, արհեստներով։ Գավառի գլխավոր ուխտատեղին ս. Լույս լեռն էր, որը պաշտել են տեղի և հարևան շրջանների քրդերը։

Բաբերդի գավառը հայտնի է մրգերով, թանկարժեք մետաղահանքերով, անտառներով։ Ճորոխ գետով դեպի Տրապիզոն առևտրական ուղին անցնում էր Բաբերդի միջով։

Սպերի գավառի նշանավոր պատմական վայրերից է Քարիձորի վանքը, որ հռչակված էր 1677 թ. գրված «Ցաստավուրքով»։ Հայտնի սրբավայրերից է ս. Հովհաննեսի վանքը։

---

[24] Հ. Կարնեցի, Տեղեկագիր Վերին Հայոց, Վաղարշապատ, 1902, էջ 26—27։

[25] Հ. Էփրիկյան, նշվ. աշխ., էջ 299։

[26] Նույն տեղում, էջ 303։

[27] Турецкий сборник, СПб., 1909, с. 144.

[28] Հ. Էփրիկյան, նշվ. աշխ., էջ 302։

Կիսկիմի գավառում է գտնվում Բարձր Հայքի և նահանգի ամենախոշոր գյուղական համայնքը՝ Խոտորջուրը։ Այն ունեցել է յոթ թաղամաս՝ Խանդաձոր, Սունենց, Կազմի խոտ, Գեղուտ, Ճիճապուղ, Կիսակ, Կրման։ Խոտորջուրը անվանվել է նաև փոքր Հռոմ։

Թորթումի գավառում է գտնվում համանուն լիճը և 40 մ բարձրությունից թափվող ջրվեժը։

Դիագին գավառը պատմական Ծաղկոտն գավառն է։ Գավառում է գտնվում բնության եզակի կառույցներից մեկը՝ բնական կամուրջը։ Գավառը հայտնի է իր բուժիչ ջրերով։ Դիագինից 15 վերստ հեռավորության վրա գտնվում է Բագավան վանքը։ Ուշքիլեի ս. Հովհաննես վանքի տեղում, ավանդության համաձայն, Գրիգոր Լուսավորիչը մկրտել է Տրդատ III թագավորին։

Բայազետի գավառի նշանավոր բնակավայրերից է Բայազետ քաղաքը, որը հնում հանդիսացել է Բագրատունիների տոհմական կալվածքը։

Նահանգի նշանավոր գավառներից է նաև Երզնկայի գավառը։ Երզնկա քաղաքը պատմական Հայաստանի Երիզա ավանն է։ Հայտնի է Անահիտ աստվածուհու հեթանոսական մեհյանով։ Այնտեղ էր գտնվում աստվածուհու ոսկեձույլ արձանը, որը մ.թ.ա. I դ. Անտոնիոսը որպես ավար տարավ Հռոմ։ Երզնկան իր գոյության ողջ ընթացքում պահպանեց ազգային դեմքը, կենցաղը, սովորույթները, մշակույթը։ Գավառի Թիլ ավանում էր գտնվում Նանե աստվածուհու մեհյանը։ Նույն ավանի կաթողիկե վանքում են թաղված Ներսես Ա՝ Ծծն ու Պապ թագավորը։

Կամախի գավառի հարուստ պատմական անցյալ ունեցող բնակավայրը Անի-Կոմախի բերդաքաղաքն է։ Այնտեղ էր գտնվում հեթանոսական գլխավոր աստված Արամազդի մեհյանը, Արշակունիների գերեզմանոցը, որն ավերվել է չորրորդ դարում։ Գավառի Թորդան ավանում էր գտնվում Բարշամ աստծո մեհյանը։ Ավանը այնուհետև դառնում է կաթողիկոսական աթոռի սեփականությունը, ուր թաղված են Գրիգոր Լուսավորչի տոհմի կաթողիկոսներից շատերը։

XIX դ. երկրորդ կեսին, հատկապես 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից առաջ, ինչպես ամբողջ Արևմտյան Հայաստանը, այնպես էլ Կարինի նահանգը դարձավ հայության տնտեսական ու քաղաքական հալածանքների ասպարեզ։ Մինչև դարի 90-ական թվականները քուրդ և թուրք ֆեոդալները տիրացան հայաբնակ գյուղերի հողերի մեծ մասին։ Կարինի նահանգի Խնուսի, Ալաշկերտի, Բայազետի, Բասենի, Քեմախի, Երզնկայի, Դերջանի, Բաբերդի գավառների 129 և ավելի գյուղերի «հազարավոր արտեր, մարգեր, արոտներ, տներ, ջրաղացներ» բռնագրավվեցին. «Օրինակ, Երզնկա—Դերջան ավելի քան 15.000 օրավար, 250—350 շենքեր, արոտատեղեր։ Բաբերդ, Բասեն, Ալաշկերտ և այլն 25.000է ավելի արտեր, մարգեր, 270է ավելի շենքեր, 7 ագարակ։ Խնուսի 19 գյուղերէն 1000է ավել արտեր, և իբր 400 շենքեր» նույնպես բռնագրավվեցին։ «Ընդամենը Կարնո վիլայեթին մեջ ավելի քան 100.000 օրավար»[29] հողեր։

Տնտեսական ու քաղաքական հալածանքների տակ ընկած կարինահայությունը եթե սկզբում չդիմանալով ճնշմանը դիմում էր պանդխտության, ապա այժմ ասպարեզ փչան դավանափոխությունն ու կրոնափոխությունը։ Այսպես, Գ. Սրվանձտյանցն ուսումնասիրելով նահանգի Քղիի գավառը, գալիս է այն եզրակացության, որ «Քղիին մեջ քիչ միջոցի տեղությամբ հայ անուն կաբող չի պիտի գտնվի, քանի որ բռնության շնորհիվ շատերը կրոնափոխության դիմած են և պիտի դիմեն»[30]։ Օգտվելով կարինահայության ծանր վիճակից, իրենց գործունեությունն աշխուժացրին եվրոպական ու ամերիկյան միսիոներները։ Կաթոլիկ ու բողոքական միսիոներներին, սակայն, չհաջողվեց ամբողջությամբ հասնել իրենց նպատակին։ Կարինահայությունը մեծ

29 Հ. Շահպազյան, Քուրդո-հայ պատմություն, Կ. Պոլիս, 1911, էջ 119։

30 Դիվան հայոց պատմության, գիրք ԺԳ, Թիֆլիս, 1915, էջ 173։

ոանքերի գնով կարողացավ պահպանել իր հավատը։ Նահանգում կաթոլիկական հավատ ընդունեցին միայն Խոտորջուրը, Սպերը, Կիսկիմը։

XIX դ. երկրորդ կեսը թուրքահպատակ ժողովուրդների ազգային դիտակցության բարձրացման, ազատագրական պայքարի բորբոքման ժամանակաշրջանն էր։ 1862 թ. Զեյթունի ապստամբությունը, 1863 թ. սահմանադրությունն ունեցան իրենց հեղաբեկիչ դերը՝ արևմտահայ ազատագրական գաղափարախոսության ձևավորման ու պայքարի զարթոնքի գործում։ Սահմանադրական շարժման բաղկացուցիչ մասն էր կազմում նաև Կարինի բարենորոգումների ծրագիրը, որն իր պահանջների, առաջադրված խնդիրների ընդգրկմամբ մի քայլ առաջ էր սահմանադրությունից և այն լրացնելու նպատակով մշակված՝ գավառների բարենորոգումների ծրագրի համեմատությամբ։ Կարինի բարենորոգումների ծրագիրը գրվել է 1879 թ.։ Հենվում էր 1876 թ. օսմանյան սահմանադրության ու Բեռլինի կոնգրեսի որոշումների վրա։ Ծրագիրը մշակվել էր Արևմտյան Հայաստանի կոմիսարին ներկայացնելու համար։ Այն կազմված էր առաջաբանից, 46 հոդվածներից և վերջաբանից։ Ծրագիրը հույս էր հայտնում, որ կոմիսարը գալով Հայաստան, կաշխատի իրագործել այն բոլոր միջոցառումները, որ պահանջում են տեղական կարիքները։

Բեռլինի կոնգրեսից հետո նահանգում սոցիալ-տնտեսական ու քաղաքական հարաբերություններն ավելի սրվեցին։ Առաջինն իրենց խժդժությունները սկսեցին քրդերը, որոնք գործունեության ասպարեզ ընտրելով Քղին, անարգել շարունակում էին իրենց բռնությունները։ «Այս գավառն ամեն օր գրեթե նոր թատերաբեմ մը կունենա, որու դերասանը Քուրտն է, տնօրենը պեյերն, և ողբերգությունը հայ երիտասարդներու վրա կը վերջանա»[31],—կարդում ենք «Մշակում»։

Ասել, թե կարինահայությունը կորցրել էր դիմադրողականությունը, սխալ կլինի։ Դեռևս դարի 60—80-ական թվականներին քաղաքում կազմակերպվեցին «Վարդանանց», «Ղևոնդյան», «Դպրաց», «Ուսումնասիրաց», «Պաշտպան հայրենյաց» ընկերություններն ու կազմակերպությունը, որոնք խոշոր դեր խաղացին ազատագրական շարժման բորբոքման ու համախմբման գործում։

1881 թ. մայիսի սկզբներին իր գործունեությունը սկսեց «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը, որն արևմտահայ իրականության խոշորագույն երևույթներից էր, ազատագրական պայքարի լուրջ ու կազմակերպված դրսևորումներից մեկը։ Այն գնահատվում է որպես «Զեյթունի հերոսական ապստամբության նման մի իրադարձություն, որը համազգային արձագանք ստանալով, դարձավ մի մարտաշունչ այգանվագ, հուշելով արևմտահայ ժողովրդին, որ իր ազատությունը նա կարող է ձեռք բերել պայքարով, այն էլ կազմակերպված, հետևողական ու զինված պայքարով միայն»[32]։ «Պաշտպան հայրենյացը» թեև գոյություն ունեցավ կարճ ժամանակահատվածում, բայց խոր արմատներ գցեց կարինահայության մեջ, որի վկայությունը 1895—1896 թթ. ջարդերի շրջանում նահանգի հայության կազմակերպված ինքնապաշտպանական մարտերն էին։

1890 թ. ծայրահեղ լարված իրավիճակ ստեղծվեց Կարինում։ Թուրքական մոլեռանդությանը հագուրդ տալու նպատակով, իշխանությունները զենք հայտնաբերելու պատրվակով, նախաձեռնեցին Սանասարյան վարժարանի, Առաջնորդարանի և ս. Աստվածածին եկեղեցու խուզարկությունները։ Թեև միջոցառումը ավարտվեց անարդյունք, սակայն թուրքական խուժանը գոհացրեց իր թալանի բնազդը։ Ջայրացուցիչ փաստը ոտքի հանեց քաղաքի ու նահանգի բնակչությանը։ Ընդհարումներին զոհ գնացին 70, վիրավորվեցին

---

31 Մշակ, 1879, № 197,

32 Ռ. Հովհաննիսյան, Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը, Երևան, 1965, էջ 333,

400 հայեր[33]։ Կարինի դեպքերը լայն արձագանք գտան արևմտահայության մեջ։ Դրանք հանդիսացան ինքնապաշտպանական ու ազատագրական պայքարի ազդակ, որի բնաբանը դարձավ «Ձայն մը հնչեց Էրզրումի հայոց լեռներեն» երգը։

XIX դ. երկրորդ կեսին կարինահայությունը ևս ապրեց արևմտահայությանը բաժին հասած ամենածանր ու արյունոտ ժամանակաշրջանը։ Կազմակերպված ջարդերն ամայացրին նահանգի շեն ու բարեկարգ բնակավայրերը, պատճառեցին մարդկային մեծաթիվ զոհեր, կարինահայությունը բռնեց գաղթի ճանապարհը։ «Այդ վայրերի մոտով գալիս ու անցնում եք առանց հայի երես տեսնելու։ Անցնում եք այդ ամայի գավառներով, տեսնում հին-հին հիշատակներ և ձեզ թվում է, որ մի հնձող ձեռք անվերջ հնձում է այդ աշխարհը»[34],—ցավով գրում էր Ա-Դոն, նկարագրելով նահանգի խնուսի գավառի վիճակը։

Թուրք բռնատիրության հայահալած քաղաքականությունը, եվրոպական տերությունների ու Ռուսաստանի թողտվությունը, լուռ համաձայնությունն ավելի էր գոտեպնդում կարմիր սուլթանին, որովհետև նա իրականացնում էր նաև հայ ժողովրդի «բարեկամների»՝ Հայաստանն առանց հայերի քաղաքականությունը, որի դեմ, դժբախտաբար, հայ ազատագրական պայքարը չկարողացավ կռվաններ ստեղծել, և կոտորածների ընդարձակ դաշտի վերածված Հայաստանի փրկությանը չհասցրեցին զինվորագրվել արևմտահայության ստվար զանգվածները։

ИЗ ИСТОРИИ КАРИНСКОЙ ОБЛАСТИ
(вторая половина XIX в.)

О. Г. ЗАТИКЯН

Резюме

Область Карин занимает значительную часть территории Высокой Армении. Вопросы истории города Карина и области, административного деления области, этнического состава населения, торговли, ремесел, вопросы культурной жизни представляют большой интерес.

В области наиболее известными историческими поселениями были города Карин (Эрзрум), Баязет, Алашкерт (Вагаршакерт), Ериза (Ерзнка), а также населенные пункты Тил, Тордан, город-крепость Ани-Комах и др.

33 Ղ. Զարբգ, նշվ. աշխ., էջ 414։
34 Ա-Դո, նշվ. աշխ., էջ 145։